ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ. Հայաստանի վաղ միջնադարյան քառանիստ կոթողները, *Երևան, Հայաստանի պատմության թանգարան, 2012, 288 էջ:*

Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության աջակցությամբ Հայաստանի պատմության թանգարանը վերջերս լույս ընծայեց «Հայաստանի վաղ միջնադարյան քառանիստ կոթողները» մենագրությունը՝ աշխատությամբ Գրիգոր Գրիգորյանի: Չափազանցություն չի լինի, եթե հենց սկզբից նշենք, որ վաղմիջնադարյան քառանիստ կոթողների ուսումնասիրության ոլորտում նման ծավալուն և մանրակրկիտ ուսումնասիրությունը պարզապես անհրաժեշտություն էր:

Գ. Գրիգորյանի գիտական անդրանիկ ուսումնասիրությունը նվիրված է վաղմիջնադարյան Հայաստանի, թերևս, ամենահետաքրքիր և ինքնատիպ հուշարձաններին՝ քառանիստ կոթողներին, որոնք կանգնեցվել են պատմական Հայաստանի տարածքում միայն որոշակի ժամանակահատվածում՝ V–VII դդ. ընթացքում և կրել լոկալ բնույթ՝ չունենալով իրենց ճիշտ զուգահեռները քրիստոնեական այլ երկրներում: Քառանիստ կոթողները հետաքրքիր են և՛ ճարտարապետական, և՛ արվեստաբանական տեսանկյունից, քանի որ ներկայացնում են ճարտարապետական փոքր ձևերի ու քանդակագործության ինքնատիպ սինթեզ, ունեն հորինվածքային տարբեր լուծումներ, հարուստ զարդաձևեր ու պատկերագրական շարք:

Թվում է, թե վաղմիջնադարյան քառանիստ կոթողները լավ հայտնի են գիտական շրջանակներում, սակայն հուշարձանների այս խումբն առանձին ուսումնասիրությամբ դեռևս չէր ներկայացվել և դրանց հետ կապված մի շարք հիմնարար հարցեր մնում էին չլուծված:

Քառանիստ կոթողներին մասնագիտական առաջին անդրադարձը կատարել է հայ արվեստի մեծ նվիրյալ Գարեգին Հովսեփյանը՝ 1944 թ. հրատարակելով իր «Գերեզմանական հին կոթողները և նրանց հնագիտական արժեքը հայ արվեստի պատմության համար» ծավալուն հոդվածը: Անկասկած, դա մեծ ներդրում էր վաղմիջնադարյան հուշարձանների և, մասնավորապես, քառանիստ կոթողների գիտական ուսումնասիրության մեջ, սակայն գիտական հարցադրումներն այս անդրանիկ ուսումնասիրության մեջ կրում էին դեռևս ընդհանրական բնույթ և կոչված էին գիտական հանրությանը ներկայացնելու ու մասնագիտական հետքրքրություն առաջացնելու կոթողների նկատմամբ: Հետագայում քառանիստ կոթողները չեն արժանացել համալիր ուսումնասիրության, չնայած որ տարբեր հոդվածներ՝ նվիրված ազատ կանգնած հուշարձանների ծագումնաբանությանը (Ս. Բարխուդարյան), ինչպես նաև կոթողների առանձին տեսարանների պատկերագրությանը (Լ. Ազարյան)՝ հրատարակվել են: Հաջորդ գիտական անդրադարձը կատարվել է արդեն 1982 թվականին, երբ Ս. Մնացականյանը հրատարակեց «Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները» մենագրությունը, որտեղ քառանիստ կոթողներին հատկացված էր մի բաժին միայն: Կոթողները կարևորվել են նաև խաչքարերի ուսումնասիրության համատեքստում (Ա. Շահինյան, Հ. Պետրոսյան):

Գ. Գրիգորյանի սույն մենագրությունը արժեքավոր է առաջին հերթին այն տեսանկյունից, որ ուսումնասիրությունը կաբինետային բնույթի չէ, հակառակը՝ հեղինակը եղել է Հայաստանի տարբեր շրջաններում և տեղում ուսումնասիրել քառանիստ կոթողները: Արդյունքում կարողացել է ոչ միայն վերագրանցել, այլև հայտնաբերել նոր՝ նախկինում անհայտ կոթողներ ու դրանց առանձին դրվագներ, նաև խմբագրել նախկինում տեղ գտած վրիպակներն ու անճշտությունները:

Գիրքն իրենից ներկայացնում է մենագրություն-կատալոգ՝ բաղկացած մի քանի

բաժիններից: Առաջինը բուն ուսումնասիրությունն է՝ կազմված ներածությունից, երեք գլուխներից ու եզրակացությունից (էջ 11–102), որտեղ առաջադրվում և քննարկվում է քառանիստ կոթողներին վերաբերող խնդիրների մի ամբողջ շարք:

Երկրորդ բաժինը՝ կատալոգն է (էջ 107–227): Այստեղ ըստ ՀՀ մարզերի, այդ թվում՝ մայրաքաղաք Երևանին վերաբերող քարտեզներ և աղյուսակներ, որտեղ կոթողներն ու դրանց առանձին դրվագները գրանցված են ըստ տարածաշրջանի և բնակավայրի: Ընդ որում, հեղինակը, նախապես ծանոթ լինելով կոթողներին վերաբերող արխիվային նյութերին, քարտեզների ու աղյուսակների վրա նշել է նաև տեղափոխված ու, ամենակարևորը, ժամանակի ընթացքում անհետացած կոթողները: Քարտեզներին զուգահեռ ներկայացված է ալբոմը, որտեղ կոթողների և առանձին դրվագների բարձր որակով արված լուսանկարներում դրանք ներկայացված են բոլոր չորս կողմերից՝ մի բան, որ այնքան անհրաժեշտ է արվեստաբանական վերլուծության համար: Տրված է նաև յուրաքանչյուր կոթողի մասշտաբը: Այս շարքին հավելված են նաև արխիվային լուսանկարներ (հիմնականում Ն. Մառի արխիվից), որոնք գալիս են ամբողջացնելու հուշարձանների այս խումբը: Մոտ հարյուր տարի վաղեմություն ունեցող լուսանկարների վերատպումը ինքնին շատ արժեքավոր աշխատանք է, քանզի դա նշանակում է երկրորդ կյանք տալ ու նաև գիտական շրջանառության մեջ դնել անհետացած կոթողները: Այսպիսով, կատալոգը թույլ է տալիս լիարժեք պատկերացում կազմել վաղմիջնադարյան քառանիստ կոթողների պատկերագրական ծրագրի ու տարածման աշխարհագրական սահմանների մասին:

Կատալոգը եզրափակվում է ՀՀ սահմաններից դուրս՝ Արևմտյան Հայաստանի ու Վրաստանի տարածքում գտնվող մի քանի քառանիստ կոթողներով: Ցավոք, այս բաժինը խիստ սահմանափակ է, իսկ օգտագործված լուսանկարները՝ միայն արխիվային: Այս հանգամանքը պայմանավորված է ուսումնասիրողի կողմից որդեգրված սկզբունքով, այն է՝ ներկայացնել միայն տեղում ուսումնասիրված և չափագրված հուշարձանները, որը նա հնարավորություն չուներ իրականացնել հարևան երկրների տարածքում: Այս հանգամանքը հուշում է նաև, որ աշխատանքը հետագայում կարելի է շարունակել այս ուղղությամբ՝ ընդգրկելով քառանիստ կոթողները ողջ պատմական Հայաստանի տարածքում: Կասկածից դուրս է, որ Գ. Գրիգորյանի կազմած կատալոգը շատ մեծ և շնորհակալ աշխատանք է, որը այսօր արդեն լայն հնարավորություններ կարող է ընձեռել պատմաբաններին, արվեստաբաններին և մշակութաբաններին՝ շարունակելու և ընդլայնելու քառանիստ կոթողների գիտական ուսումնասիրության շրջանակները:

Գրքի վերջին բաժինը (էջ 231–251) հավելումն է, որտեղ ներկայացված է աշխատանքում եղած բոլոր պատկերների լուսանկարային ցանկը՝ համապատասխան համառոտ ծանոթագրություններով: Դրանց մեջ առկա են կարևոր տեղեկություններ կոթողների վայրի ու վիճակի մասին, դրանց ստույգ չափերը: Այստեղ առկա են նաև բնակավայրերի (կոթողների), հայտնաբերված վայրերից տեղափոխված կոթողների, ինչպես նաև բնակավայրերի վերանվանված անունների այբբենական ցանկերը:

Գիրքն ավարտվում է ռուսերեն և անգլերեն ընդարձակ ամփոփումներով (էջ 269–279) և գրականության ցանկով (ընդգրկված են աղբյուրների և ուսումնասիրությունների մոտ հարյուր անվանումներ):

Ուսումնասիրության առաջին գլուխը նվիրված է քառանիստ կոթողների հետ առնչվող ընդհանրական բնույթի այնպիսի խնդիրների, ինչպիսիք են՝ ակունքները, անվանումը, աշխարհագրությունը, տեղադրությունն ու կողմնորոշումը, շարժառիթներն ու նպատակները, արձանագրությունները և, վերջապես, կոթողների վիճակն ու պահպանությունը: Քառանիստ կոթողների կանգնեցման հարցում հեղինակը ակնհայտ ժառանգական կապ է տեսնում հեթանոսական և վաղքրիստոնեական ավանդույթների միջև՝ այս իմաստով համաձայնելով գիտնականների մեծ մասի հետ: Նա փորձում է մանրամասնել կոթող, ստելա, օբելիսկ, մահարձան հասկացությունները և

այդ անվանումների տակ ենթադրվող կոթողների տիպերը՝ ճշգրտելով նաև հայկական քառանիստ կոթողների նկատմամբ կիրառվող տերմինների նպատակահարմարությունը: Հստակեցվել են նաև քառանիստ կոթողների առանձին տարրերի անվանումները՝ համաձայն վերջիններիս գործառույթային և սիմվոլիկ նշանակության (օրինակ, կոթողի պատվանդանն առաջարկվում է անվանել սեղան):

Մեծ նշանակություն ունի Գ. Գրիգորյանի կողմից քառանիստ կոթողների տարածման աշխարհագրության սահմանների հստակեցումը: Մասնագիտական գրականության մեջ ամրացած այն կարծիքը, որ ամենից շատ կոթողներ հանդիպում են Շիրակում, չի համապատասխանում իրականությանը: Հեղինակի կազմած քարտեզներն ու աղյուսակները հիմք են տալիս պնդելու, որ, այսպես կոչված, «Շիրակի խմբի» կոթողների մեծ մասը գտնվում է Արագածոտնում, այլ ոչ թե Շիրակում, իսկ միասին ներկայացնում են պատմական Այրարատ նահանգի կոթողները: Հեղինակը հանգում է այն եզրակացության, որ կոթողների տեղաբաշխումը կապված է տարածաշրջանում իշխող նախարարական տների կրոնամշակութային կողմնորոշման հետ: Գ. Գրիգորյանի ուսումնասիրությունն ու փաստերի համադրությունը ցույց է տալիս, որ սխալ է կոթողների տեղադրումը կապել միայն բազիլիկ և այլ տիպի եկեղեցիների հետ: Բացի այդ, հեղինակը ցավով նշում է, որ երկու հարյուրից ավելի կոթողների մեջ միայն երեքն են պահպանվել իրենց նախնական տեղում: Մենագրության մեջ բարձրացվում է ավելի քան արդիական և հրատապ խնդիր՝ կոթողների ներկայիս վիճակը: Մի բան է, երբ կոթողները ջարդվում և ոչնչանում են պատերազմների ու արհավիրքների արդյունքում, սակայն բոլորովին անհանդուրժելի է, երբ քառանիստ կոթողներն «անհետանում» են գտնվելով «պետական» հսկողության ներքո, ինչը տեղի է ունենում վերջին 50 տարվա ընթացքում: Այս խնդրի լուծման տարբերակներից մեկը Գ. Գրիգորյանը տեսնում է «Քարեդարանի» գործունեության մեջ, որը ենթադրում է կորստյան դատապարտված՝ հողի մեջ թաղված, մամռակալած պատի շարվածքում օգտագործած կոթողների դրվագների հավաքումը և մշտական ցուցադրության պատրաստումը:

Ուսումնասիրության երկրորդ գլուխը նվիրված է քառանիստ կոթողների ծավալատարածական հորինվածքի և կառուցվածքային տարրերի, նաև պատկերագրության ու ոճի քննությանը: Այս առումով կատարված է մանրազնին քննություն քառանիստ կոթողների բաղադրիչ մասերի, դրանց ձևի ու չափերի վերաբերյալ: Բացի այդ, հեղինակը հայտնաբերել և նկարագրել են նոր տարրեր, օրինակ, երկրագնդի մանրակերտը: Առանձին ուշադրության են արժանացել կոթողները պսակող ազատ խաչերը և դրանց ձևերը:

Գրքում անդրադարձ կա նաև կոթողների շինարարական տեխնիկայի հարցերին, քանզի դրանք փոքր ճարտարապետության նմուշներ են, բացի այդ՝ ուշադրություն է դարձված բուն նյութին՝ քարի տեսակին, որից կերտված են քառանիստ կոթողները: Պատկերագրությանը և ոճին նվիրված երկրորդ գլխում կոթողների զարդաձևերի ու պատկերաքանդակների քննությունը տրված է ըստ պատկերների խմբերի: Դրանց մեջ առանձնացված են աստվածաշնչային թեմաները և կերպարները, Քրիստոսի և Տիրամոր պատկերները, Տերունական շարքը, առանձին սրբերի ու պատմական անձանց կերպարները, թռչունների և կենդանիների պատկերները և, վերջապես, բուսական ու երկրաչափական զարդապատկերները: Ինչպես տեսնում ենք, այս շարքը շատ ընդգրկուն է և մի ուսումնասիրության շրջանակներում դժվար է տալ դրանց բազմակողմանի սպառիչ քննությունը: Հեղինակը, այնուամենայնիվ, կարողացել է պատշաճ կերպով համակարգել նյութը, առանձնացնել առավել հետաքրքիր և կարևոր տեսարաններն ու զարդաձևերը, կատարել առանձին տեսարանների վերլուծություն ու նաև որոշ ճշտումներ մտցնել ավելի վաղ կատարված մեկնաբանությունների մեջ (օրինակ, վերանայվել են Մկրտության տեսարանի հորինվածքային մանրամասները): Առանձին հատված է նվիրված կենդանագլուխ մար-

դու կերպարի պատկերագրական և իմաստաբանական քննությանը, և ի մի են բերված կոթողների վրա հայտնի բոլոր նման պատկերները: Ցույց է տրված, որ քառանիստ կոթողների վրա կենդանիների և թռչունների պատկերները շատ ավելի մեծ տեղ են գրավում ու շատ ավելի բազմազան են և պատկերագրական տեսանկյունից հետաքրքիր, քան դա ենթադրվում էր նախկինում:

Գրքի երրորդ գլուխում բարձրացվում է քառանիստ կոթողների թվագրության և ժամանակագրական սահմանների հարցը: Կոթողների հետ առնչվող այս խնդիրն իրականում բավական բարդ է: Հեղինակը նորից մեջբերում է պատմական աղբյուրները և հայ արվեստի ու ճարտարապետության մեծանուն ուսումնասիրողների կարծիքներն այս առումով: Ըստ Գ. Գրիգորյանի՝ կոթողների ժամանակագրական ստորին սահմանը հնարավոր է ետ տանել մինչև մ. թ. 1-ին դարը: Հաստատելու համար սույն տեսակետը, հեղինակը քննության է առել երկու հայտնի օրինակներ՝ Գառնահովիտի սյունը և Ապարանի խոյակը, քանզի վերջիններս ունեն մեկնաբանության համար «բարդ» պատկերներ, որոնք, չգտնելով զուգահեռներ քրիստոնեական պատկերագրության շրջանակներում, կարող են համարվել հեթանոսական: Չհամաձայնելով առաջարկված ժամանակագրական սահմանների հետ՝ նշենք, որ քառանիստ կոթողների թվականության խնդրի բարդությունը պայմանավորված է համալիր մոտեցման բացակայությամբ, որը պահանջում է ոչ միայն աղբյուրագիտական ու ճարտարապետական, այլև հնագիտական ու արվեստագիտական և բանասիրության բազմակողմանի քննություն: Թերևս, մի հետազոտության շրջանակներում հնարավոր չէ դա իրականացնել: Գ. Գրիգորյանի ուսումնասիրությունը կրկին մատնանշում է այս խնդրի բարդությունն ու այդ ուղղությամբ տարվող ապագա աշխատանքների անհրաժեշտությունը:

Գ. Գրիգորյանի ներկայացված մենագրությունը լուրջ ներդրում է վաղմիջնադարյան արվեստի ուսումնասիրության բնագավառում: Ոչ միայն բովանդակության, այլև արտաքին ու ներքին ձևավորման առումով գիրքն աչքի է ընկնում և զգալի տարբերվում մի շարք այլ հրատարակություններից: Գրքի տպագրությունն ու ձևավորումը արված է մասնագիտական և գեղարվեստական շատ բարձր որակով: Եվ պատահական չէ, որ մենագրությունն արժանացել է 2011 թ. Մոսկվայում կայացած երիտասարդ մասնագետների «ԱՊՀ Դեբյուտ» մրցանակաբաշխության մրցանակին՝ նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման ու հարահոչակման ոլորտում՝ «Հետազոտություն և հայտնաբերում» անվանակարգում:

ԶԱՐՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ